

Դ Ա Ս Տ Ի Ա Ր Յ Կ Ո Ւ Ք Ի Ի Ն

Կ Ա Ն Ա Յ

(Շարունակութիւն, տես թիւ 91)

Այս և իւր երեք որդիք մեր երկրորդական խանձարուրն են, Յաբեթը, Սեմը, և Քամը նոր ստերը եղան Այս արմատէն ու մեր սիրեցանքը Սէք Յաբեթի ցեղէն անոր որդւոց որ գիւնեբը ենք, մեր, այն է՝ Յաբեթի ցեղը շատ մեծ ու նշանաւոր եղաւ շատ ակրութիւններ իրեն մէջ ունեցաւ և շատ ազգերու բաժնուեցաւ. ուրիշներ թող տալով, մեր ցեղին ու մեր ազգին մէջ երեւելիները կարճ ՚ի կարճոյ սիրուն շայկանու շիգ պիտի պատմեմ,

Յաբեթէն վերջ մեր Նահապետաց երկրորդն է թորգոմ, թորգոմէն զինի շայկը. որ մեր ազգային անունը սակէ կ'առնեմք իւր քաջութեան համար. զի այս մեր ազգապետը Աստուածասէր հայրենասէր և աւանդապահ էր, ու այս շայկին ատեն Քամին սերունդ է Քուշանայ թող ժանդ Քէլ երկինց դէմ վէգ գալու կը միտեր Սենարայ գաշտին մէջ, որ Քարիլունին ժող է, որուն պատճառաւ իւր անուն Քարէլ մնաց. այն է խառնակութիւն. զի բոլոր ազգաց նահապետները ժողովրդով մէկ տեղ այն ամբարիշտ մարդը, Քէլ հոն կ'անցած էր մէկ մեծ աշտաբակ մի շինելու. այս չար գործը տեսնելով Աստուած հիմն ՚ի վեր կործանեց աշտաբակը, ու մարդկանց լեզուները բաժնեց, այնպէս որ սկսան գտնազան խօսքեր ընել որ իրարու չէին կրնար իմացնել:

Այս ամբարիշտ Քէլ որ զինքը Աստուծոյ պէս պաշտել տալ կուղէրով որ չհնազանդէր մահու կը մատնէր, ինչպէս ըսի մեր ազգապետ շայկը ասաւ

ուսածապաշտ ըլլալով կը մերժէր ասոր վատ խնդիրը ու նա ալ անթիւ զորք մեր քաջ հօր վրայ վաղեց Քարիլունէն ՚ի շայտատան, որուն անուն դեռ անատեն Սառնապատ լեռներ կ'ըսուէր, Քարիլունի ջերմութեան հետ բաղդաւ տեղով: Այս քաջ աւանդապահ շայկը իւր որդւոց և երկրի կարիճներով ուրոնք երեք հարիւր հստ էին, ելան այն չար գողողին և իւր անթիւ զորաց դէմ, որ մեր աստուածասէր նահապետի սլաքին խիտ արժանաւոր նըպատակ եղաւ, զարկաւ մեր քաջ շայկը իւր սլաքը անոր սրղպատեայ կուրծքէն անցուց միւս կողմը, զոր իւր աստուածութեան արժանի նուէր ընդունեց մեր բարեպաշտ հօր բաղուկէն. երբ բանակը տեսաւ որ իւր անուհի առաջնորդ հսկայ թագաւոր Քէլը շայկին առաջ դիտապատ ընկաւ յաւիտեան չ'եղնելու համար, փախան իրենց երկիր, ու մեր բարի նահապետ հաւասարութեմ, և ոչ աստուածութեմ իրուսուեցով, ինչպէս որ կ'ամբարտաւանէր չար բռնաւորն Քէլ. այս մեր բարի ազգապետը, ընտիր նահապետը շայկը իշխեց ազգին և իւր իշխանական գաւազան և իրուսաւ սիրտը փոխան ձեց իւր որդւոց, որոնք իրեն պէս անուն ունեցան: Ասոր առաջին ու սրայծառ յաջորդ Արամն էր, որ իւր աշխարհի շէնութեան և բարեկարգութեան մեծ սէր ունէր, ու երբ արտաքին թշնամիք մեր երկիրն ու մեր շայրենիք կողոպտել կուղէին, Արամ իւր կարող քաջութեամբ անոնց բաղձաւոր հակառակ կը կատարէր, այս մեծ մարդը մեր ազգի անունը այն քան վսեմացոյց, որ անկէ զինի Արամեան ազգ սկսան մեզի ըսել, որ կ'երեւի կարիճ ըսել է, կարիճէն առնելով իւր անունը: Այս մեծ մարդը իւր իշխանութիւնը փառաւոր կերպով վարեց և իւր Արամ գեղեցիկ

որդւոյն թողուցի յանդ Վելի յաջորդ-
ներ իրենց անպատուութիւնը չճո-
նալով կը սխային Հայաստանի դէմ.
մեր գեղեցիկ իշխան Արայն կը փայլէր
իւր գեղով հանճարով և բարոյակա-
նով, ու Շամիրամն ալ կը նեղուէր
իւր անբնական կրակէն. ուստի հրա-
ւէր կը կարգար մեր իշխանին արա-
մեան Արային երթալ իրեն կամոց
համեմատ շարժիլ. խնարհիլ այն վայ-
րագ թագուհու հեշտախտային ցան-
կուէր ու իրենց հայրենեաց կեղա պար-
տութիւր ջնջել. Հնար էր բարոյականի
տէր մարդ մը այնպէս անպատուութե-
ղիջանելը. բաւ լիցի՛ Աստի տափոտի կիր-
քը ելած բանակ կը հանէ մեր հայրենեաց
ու իշխանին վրայ, ու Արայն պատե-
րազմի մէջ կ'իյնի անարատ բարոյակա-
նալ. Վեր որդին Արամոս կը յաջորդէ ա-
նոր, ու այսպէս պարզ և ազնիւ իշխա-
նութեան կը հասնի հայկազնեան Պա-
րոյրը՝ որուն գլուխ թագ ալ կ'ունե-
նայ, այս թագի ու գաւազանի շքով
երեւելի թագաւորներ ունեցանք օ-
րինակի համար Արուանդ, Արուան
գեան Տիգրան, Արտաշէս, Օարմայր
և այն, որոնց պատմութիւնը մեր նախ-
նի Հարց գրուածոց մէջ օր մը կը
կարգաս:

Այս հայկազեան իշխանութիւն և
թագաւորութիւն մեր ազգի ուրիշ
իշխանութեան հետ բազդատելով շատ
մեծ էր ու՛նակաւ. թող կուտամ Տիգ-
րանի, Արտաշիսի արեղերակալութե-
գործքերը, որն ըստ իս վատ է քան թէ
լաւ: Սկիէ զկնի երեք աստիճանաբար
իրարմէ թէ տարօք թէ փառօք տար-
բեր թագաւորութիւն ալ ունեցեր
ենք, այն է, Արշակունեան, որ մեր ազ-
գի առաջին թագաւոր Վաղարշակն է,
ու վերջին Արտաշիւր. երկրորդ Վազրա-
տունեանց. որուն առաջին թագակիր
Աշտուն է, ու վերջին Վազիկ. երրորդ՝

Ռուբինեան տէրութիւն, առաջին իշ-
խան Ռուբէն, թագաւոր Սեւն ա-
ռաջին ու վերջին Սուսնեան Սեւն
Ինչպէս ըսի սիրելի ազնիւս, ոչ Արշա-
կունեան թագաւորք կարողացան հայ-
կազանց պէս անկախ ըլլալ. թէ և ու-
նէին վեհ թագաւորներ, ինչպէս Ար-
տաշէս, Արուանդ, Սասրով ու բարի և
սուրբ ինչպէս Անդրանիկն Իբրիստո-
նեայ թագաւորս Արգար եւ մեծն
Տրդատ, ու այսպէս ալ Վազրատու-
նեանց թագաւորներ որքան որ ջանա-
ցին և ոչ Արշակունեան թագաւորաց
ազատութիւր ու խաղաղութի վայելցին:

Այս ընտիր ցեղը հազիւ թէ
երկու երեք անուղղայ թագակիր ու-
նեցաւ, բայց գէշ պաշտօնեայ շատ,
որոնց գլխաւորներ վեստ Սարգիս և
Աիրակոս երեց, Ռուբինեանք խեղճ
բուսան խեղճ անցան, նա մանաւանդ
Վատին կղերի յուսացուցիչ ունայն
խոստումով կ'ապրէին: Անուրանայի է
որ մեծ հանճարի տէր գլուխներ ալ
ունեցանք այս տան մէջ ինչպէս էր Հե-
թում, Օլայել թագուհին և այլն:

Արք Սուսնեան Սեւն շլթոյ
ուսած Ազգիպտոս գնաց Հայու արիւ-
նը այն օրէն սասեցաւ, անբնական
կերսով Վաւիթ Սիւնիի օրով մէկ մի
եւս շարժեցաւ և այ շարժելիք չունի,
այսօր մեր Հայրենիքը իմ գատրիկ ու-
րիշ անունով կը կանչուի Հայը հը
պատակ է:

Վեր իրաւունք մեռած կը համար-
ուի, իր ինչքը առանց ապահովու-
թեան մեր արդի կեանք կամ աղքատի
կազմութիւն կրօնական է և ոչ թէ
քաղաքական, մեր քաղաքական իրա-
ւունք ուրիշին առաջ կը կորսուի:

Այս խօսքերը խելքիդ հասնելու
բաներ են Հայկանուշ, չեմ ուզեր
սուր ուշդ բթացնել այնպէս բանե-
րով որ պիտի բան մը չզգաս մինչև

որ մարդն ինչ է չգիտնատ :

Հայկանուշ Հայու անուն կրելով բան մը չես ըլլար եթէ որ Հայու, ճշը մարիտ Հայու սիրտ չկրես, եւ քու զուակի մէջ Հայու սիրտը չգնես :

Իմ սիրելի աղջիկ մեր նաւիրական սրարտքն է որդի ծնիլ, ու որդւոյն մէջ սիրտ գնել . ինչպէս որ ժամուէլ մը թերթը կը ծնի, ու թերթի վրայի գրուածքը, այնպէս սիրտեր չունինք աղջիկս որ մի և նոյն վննին ու իրարու նման, այնպէս սիրտեր գրենք որոնք մի և նոյն իմաստը ունենան, այն է իրենց պարտքը և իրաւունքը ճանչնան : Թէ որ կարգաս մեր նախնեաց պատմու թիւնը կը տեսնես, թէ մեզ համար ինչ պէտք է, պիտի իմանաս թէ ինչ պիտի ընենք :

Ազգային մասը կարճ խօսեցայ, ու նոյնպէս կրօնականը խիստ համառօտ պիտի խօսիմ իմ սիրուն դստրիկիս, ու դու սիրով պիտի լսես, այն կը խոստով վանիմ թէ իբրև պատմական շարքով ու ժամանակով չեմ խօսիր բայց եւ կարեւորներ բեզի կ'իմացնեմ, կ'նջ մը իւր դեռ ափթիթ մանկան ասկէ աւել լի խօսել չի վայելեր :

Նորէն այն օրհնեալ մարդուն քով պիտի ելնենք, այն է Նոյ, ասոր միջին տղան Սեմը մեր Յաբեթի պէս օրհնեալ զարմ ունեցաւ, ու շատ տարածեցաւ : Այս Սեմայ որդւոց մէկն էր Աբեր, որ Աբրայեցւոց ցեղապետն է : Այս Աբերի տունէն ելաւ Աբրահամ, այն որ իւր հաւատով ու ճշմարիտ աստուածածանօթութեամբ Աստուծոյ սիրելի եղաւ . այս մարդէն կ'սկսի ճշմարտին Աստուծոյ երկրորդ դուրձն ճամբան, ասոր կ'ինը որ խիստ գեղանի էր անունն Սարա էր, ասոնք Աւետեաց որդի մը ունեցան Սահակ անունով, այս Սահակի ունենալուն երբ Աստուած Աբրահամին կը խոս-

տանար Սարան անհաւատ կերպով կը խնդար . ուստի Աստուած չորս հարիւր տարի այն օրէն վճիռ սահմանեց որ անոր սերունդ Աբրայտոս գերի մը նան : Աստուած՝ զՍահակ Աբրահամը փորձելու համար պատարագելու զուհելու ուղեց ու Աբրահամ յօժար կամօք իւր սիրելին Աստուծոյ զոհ ընելու տարաւ, բայց Աստուած՝ հրեշտակի ձեռօք Սահակի տեղ խոյ մը տուաւ պատարագելու : Այս Սահակ հօրը հրամանին համեմատ Աղիազարի տան հազարապետի ձեռօք իւր աղգէն իրեն կ'ին բերել տուաւ Սեբեկայ անունով որ շատ խելացի ու երկիւղած աղջիկ մի էր . երկու որդի երկորեակ ունեցաւ Սեբեկայ առաջին Յեզոմ՝ Ասաւ, երկրորդ Յակոբ, Ասաւ կտրիճ որսորդ էր, Յակոբ՝ տնասէր : Սահակ ձերացած ատեն աչքերը չէր տեսներ, ու օր մը կարծեց թէ մեռնելու մօտ է, ու զեց իւր օրհնութիւն Ասաւին տալ, զի անիկայ էր մեծը բայց Յակոբը Սեբեկան մայրն աւել լի կը սիրէր ուղեց որ Յակոբն առնէ այն օրհնութիւնը, ու իրօք ալ առաւ . այս օրհնութեան համար Ասաւ ըզ- Յակոբ կ'ատէր, ուստի ան ալ փախաւ գնաց իւր քեռիին իր մօր եղբոր տուն միջագետ : Այն տեղ Յակոբ մեծցաւ թէ հարստութիւնով և թէ որդւով, զի երբ իւր երկու կընոջ հետ միջագետէն կը դառնար տաւրն և մէկ արու զաւակ ունէր, ոչ խար ուղտ և ուրիշ կենդանիք շատ : Այս զարմանալի մարդը երեք գէպ ունեցաւ՝ այն է եղբօր օրհնութիւնն յափշտակեց, որով շատ ճոխացաւ, երկրորդ՝ փախելու ատեն տեսաւ այն մեծ տեսիլ, ուր տեղաց անուն դուռն երկնից դրաւ, և վերջէն երբ կը դառնար Աստուծոյ հրեշտակի հետ ըմբշամարտեցաւ ու ոտքին մէկը կաղ-

մնաց . և այն որէն Իսրայել անուն ունեցաւ , որ Աստուածատես ըսել է :

Իւր երկոտասան որդւոց մէջ Յովսէփ խիստ սիրուն և խելօք էր , ուստի Յակոբ զայն շատ կը սիրէր , որուն համար եղբայրներն զանի կ'ատէին , այնքան հասցուցին իրենց ատելութիւնը որ իրենց գառնուկ եղբայրն բարի Յովսէփ Յակոբէն գաղաուկ Իսմայելացւոց ծախեցին , ու անոնք ալ բերին Ագիպտոս Փարաւոնի դահճապետին ծախեցին , այս եղաւ իրենց գերութեան սկիզբն , ինչպէս որ Աբրահամին կանխաւ ըսած էր Տէրը : Յովսէփ Ագիպտոսի մէջ իբրև անգին ադամանդ շատ փորձերէն անցաւ իր անմեղութիւնն ու սրբութիւնը արեւու պէս փայլեցը ներսով , հուսկ ապա Ագիպտոսի իշխան եղաւ Փարաւոնի երազ պատմելով , ու իրեն եղբարք սովէն նեղուելով իրեն դիմեցին չգիտնալով , երկրպագութիւն ըրին ու ցորեն առին , այն եղբորէն , որուն երազատես կ'ըսէին , ու այն մարդուն կ'ըսէին գազան կերաւ որուն առաջիւ կը դողային , ու այն եղբայրը ծախեցին , որ իրենց հաց կուտայ որ ուտեն սալբին : Արիտորդին Յովսէփ ինքզինք յայանեց ու հարկագրեց որ երթան Յակոբ իրենց պատկառելի հայրը բերեն : Յակոբ Յովսէփը տեսաւ ու նորէն իւր սիրելին համբուրեց , իւր որդւոց պէս Յովսէփոյ որդիքն ալ օրհնեց : Յակոբայ տունը երբ Ագիպտոս մտան եթանասուն և հինգ հոգի էին , ու օր աւուր վրայ զարմանալու ածումն կը տեսնուէր Իսրայելի տան եւ աղբին մէջ , ու այն տարօրինակ ածումը աչքի կը զարնէր , որով և Փարաւոններու սիրտը բարկութեան կը դրդէր , ու կուզէին որ ճնշուին բայց անհրճաբար եղաւ , երախայք գետամոյն կ'ընէին , դահեկաց սպառնալք կը կար-

դային որ ոչնչացնեն Իսրայելի տառաւակները , այս ժիջցին էր որ այն մեծ և սքանչելի հայրենասէր Մովսէս ծնաւ , ու նա եւս գետ նետեցին , բայց Փարաւոնի քոյրը իւր որդեգիր սնոց զանի , ու երբ կատարելութեան հասաւ այս Մովսէս , սիրտը հանձարին հետ քալէ , ըսաւ իրեն , ու քալեց Իսրայելի թնամին մեծցուց ու թաղեց . երկրորդ օր երկու համարին եղբայրներ ՚ի խաղաղութիւն յորդորեց կուռելու ատեն , իսկ զրկուողը ըսաւ « Ի՞նչ , ինձի ալ մեռցնել կուզես , ինչպէս երկէ մեռցուցիր Ագիպտացին » : Այս խօսքէն վախցաւ Մովսէս Մադիւամացւոց աշխարհ փախաւ հոն հովիւ էր , երբ տեսաւ այն սքանչելի տեսիլ որ մորենին կը վառուէր ու չէր ածիւն կտրեր , ու այն մորենիի մէջէն լսեց , այն քաղցր ու ծանր հրաւերը , թէ իմ ժողովուրդը Ագիպտոսէն պիտի հանես ու այս հրաշքները պիտի ընես : Սիրելի աղջիկս այս սիրուն կէտերը պէտք է սուրբ Գրոց մէջ կարդաս որ Աստուծոյ մեծփայելչութիւնը , սերը և արգարութիւնը տեսնես , ու սիրա մը առանց զարմանալու չի կրնար մնալ , քանի որ այնպէս մէկ գթած խնամակալ Հօր մը կը հանդիպի . կ'ըսէ Տէր՝ այն մեծ մարդուն . « Իմ ժողովրդեան աղաղակը ինձի հասաւ ու անոնք վիրկերու համար գրեց կուռարկիմ , իմ ձեռքս ու զօրութիւնս քեզի հետ է » : Հայրենասէր Մովսէս Տէրով հրամանին կը հնազանդի սիրով , նորէն Ագիպտոս կ'իջնէ իւր Ահարոն եղբայրը գեմ կ'ելնէ ինչպէս որ Տէրը նշան տուած էր և զայն անոր թարգման կացուցած էր ՚ի Քարեք :

Այս Աստուծոյ մարգարէն , Իսրայելի առաջնորդ , Ագիպտոսի հարսուածիչ , Աստուծոյ սուրբ արգարութեան վերիմարուծը՝ ըրաւ ինչ որ ընել պէտք

էր այն քար սիրտ Փարսունին այն տմարդի Ազգիպատացոց, ու բարձր բազկով և սքանչելի զօրութեամբ Իսրայէլ Ազգիպատսի գերութեան շղթան փշեց իւր ճշմարիտ Ատուծոյն խոտացած ժառանգութեան տիրելու, ազատ իշխան լինելու կանչեց. Վովսէս, հեղ և բարի առաջնորդը իւր դէմը թու մի գտաւ ժողովուրդը անցնելու այն էր Արարի ծովը, իսկ ծովը իշխող Իսրայէլն Ատուածը զայն եւս պատեց ու երկուքի բաժնեց մինչեւ որ իւր սիրելոյն որդիք Աբրահամու զաւակները անցան:

Չարին գերեզման, արդարին կեանք կուտայ Արարի ծովը պատուածքը զի Ազգիպատցիք ջանալով ձեռքէ երւծը նորէն գերել, այն ջուրի ձորակէն անցնելու երկիրը չունեցան, որուն մէջ ոչ որ ապրելով սուղան: Այս սքանչելիքը փրկուած ժողովուրդը, արդեօք Վովսիսի ուղածին պէս կը սիրէին իրենց փրկիչը, ոչ թէ կը սիրէին այլ կը փորձէին, այն աստուածը՝ որուն զօրութիւնը որբանութիւնը անկարելի էր չափել: Երբ գիշերը իրենց լոյս կուտար և ցորեկ հովանի կը լինէր. «Վիժէ մեզի միս կրնայ տալ» կըսէին, ու երբ քիչ մի կը նեղուէին, գերութիւն հաց ու կեղակուր քաղցր և ցանկալի ընել կուզէին:

Այս անգգայ ժողովուրդը այնքան շնորհաց յարգը չճանչնալով գրեթէ զի տապաստ անապատի քառասուն տարւան ճամբորդութեան մէջ ինկան, այն Ազգիպատսէն ելնող ազգէն հազիւ երկու հոգի իրենց աւետեաց երկիրը ոտքը դրին, իրենց որդիք ժառանգեցին այն Ատուծոյ սիրելի Վովսիսի յաջորդին Յեսու Աւետանի առաջնորդութեամբ:

Աբրահամ հաւատոյ հայրը՝ Իսահակ անոր բարի որդին՝ Յակոբ և իւր երկոտասան որդիքը, որոնք Իսրայէլն նախահարք անուանեցան, Վովսէս

Յեսուն իրրեւ բան մը կորսնցուցած կը գուշակէին. Ատուած իսկ կ'ուխտէր թէ քու զաւակաց մէջէն պիտի գանես, Աբրահամ Սահակէն կը յուսար, Սահակը ախափելով Ատուծին մէջ կուզէր գտնել, Յակոբ յափշտակեց, Յակոբ ակներեւ Յուդայի մէջ տեսաւ, Յուդան կտակեց իւր ցեղը միշտ վեհազն և յայտնի կենայ, Վովսէսը ըսաւ ձեր մէջէն մարգարէ պիտի ելնէ ինձի պէս անոր ըսեցէք, Յեսուն անոր սիրուն անուան պէս անուն կը կրէր, բայց չէր, այս հաւատոյ շղթայի օղակ աղքը դեռ շատ պէտք էր սպասել, ուստի դատաւորներ ունեցաւ երբեմն ճշմարիտ Ատուածպաշտութեանն մթնցաւ, հարուած կերաւ ու դարձաւ, Ատուծոյ թագաւորութեան տակը, երբ բնական կերպով կ'ապրէր, երաւ մարդկային թագաւորութեան տկար և անբնական իշխանութեան տակը մտնել ուղեց: Ատուած թելադրեց Սամուելը որ հօր էշեր կորսնցնող Սաւուղը՝ թագաւոր օժեց, տես աղջիկս մարդկանց յիմարութիւն, կեանք տուող Ատուծոյ գաւազան և իշխանութիւն կը մերժեն, էշ կորսնցնող տկար արարածի զօրութեան կ'ապաւինին:

Այս Սաւուղ առջի բերան Տէրոջ առաջ գլուխ խոնարհած քաղց ու Ատուծոյ օրինաց հնազանդ, Ատուած ալ իրեն օգնեց. երբ թուլցաւ ու ճամբան ձռեց, Ատուած ալ զայն մերժեց. իւր սիրելի Գաւիթը թագաւոր օժելու Սամուելին հրամայեց, այս այր՝ ըստ սրտին Ատուծոյ, իւր բոլոր սրտով Ատուծոյ ճամբուն մէջ քաղց, ինկաւ բայց չուտ ապաշխարեց, մարգարէ, թագաւոր և սուրբ կեանքով ապրեցաւ իւր երկոտասան տարու Սողովման խելքը որդւոյն թուղուց իւր գաւազան և թագը:


Սողովմանը իմաստուն թագաւորը իւր հանձարով ցանկալի ամենեցուն եղաւ և պատկառելի համբաւ ունեցաւ, խաղաղ թագաւորեց. բայց վերջ թիւրեց ճոխութիւն և կեիկներ բծաւորեցին իւր ճշմարիտ հաւատը: Ունեցան Հրեայք շատ թագաւորներ թէ (Յուդայի ցեղէն և թէ Իսրայելի տաան ցեղէն, որոնք կռապաշտութե մէջ մարտեցան, Յուդայի թագաւորները երբեմն կռապաշտութեան ետեւէ գնացին, այս ժամանակներու մէջ մեծ և սքանչելի մարդիկ ելան, որոնք մարգարէ անուն ունէին, այս մարգարէք մարդկանց Փրկչի գալը և ինչպէս փրկելը կը գուշակէին:

Իսրայէլ իւր վատութեան պատիժը կրելու համար Ասորուց թագաւորներէն գերի գնաց այն Ասուծոյ մեծ տաճարը, որ Սողովմն շատ ծախքով և հանձարով շինել տուած էր ակրեցին, և թամաստուն տարի գերութեան ճաշակէն զգացին թէ ինչ բարի Ասուծոյ դէմ մեղանշած են, ու իտեցին որ ալ անոր սիրուն օրինաց հընազանդին և զայն ՚ի բոլոր սրտէ սիրեն, ուստի Աստուած ալ անոնց գերողի սիրաւ քաղցրացոյց նորէն իրենց հայրենիք դարձան իրենց նուիրական տաճարը շինեց: Օրաբարէլ երկիւղած ճշմարտասէր Այս գերութենէն վերջ շատ երեւելի ու նշանաւոր և զան Սակաբեանք, որոնք ճշմարիտ սիրով վառուած, թէ կրօնք եւ թէ հայրենիք պաշտպանեցին, այս ժամանակաց մէջ ճշմարիտ Աստուծոյ երկրպագութիւն չթուկնրով էր եւ ոչ թէ սրտով. օրէնք յարգել կեղծօք էր և ոչ թէ ճշմարտութեամբ: Իսրայելի կամ Հրէից վրայ ըրածս զբուրցք կը վերջացնեմ իմ սիրելի աղջիկս, և դու, անոնց պատմութիւնը չես հարցներ, թէ ինչն այսպէս հա-

մառօտ ըրի. երկու պատճառ ունի սիրելիս, նախ՝ որ եկեղեցւոյ անդամ են այն աղբը մինչեւ ՚ի Բրիտանա. երկրորդ՝ որ իրենց պատմութիւն Սուրբ Գրոց հետ կրօնակցութիւն ունի ուստի պէտք էր. այս Արքահամալ Ալեւտեաց սրգին, այս Սահակայ սերունդը, այս Յակոբ Իսրայելի երկոտասան շառաւիղը, տարբեր ու սքանչելի կեանք մը ունեցաւ և մասնաւոր հսկողութե տակ մեծցաւ, յառաջացաւ, ըմբոստացաւ, ստրկացաւ, ազատ գլուխ ունեցաւ, գերի, ոտքը շղթայի մատնուեցաւ, ոգի առաւ, հիւանդ ինկաւ, վերջ երբ յաւիտենական առողջութեան գեղը պիտի ընդուներ մերժեց կորաւ. այս է այն աղբի համառօտ կեանքը, որն երկինքէն օրէնք ընդունած էր, ու այն պատուական պատուէրները կուղեմ իմ սիրելի դասորիկիս սրաին վրայ քանդակել ու այն սուրբ զորդով Իեթիէհէմ երկնից Աստուծոյ որդւայն ճնուեղ տեսնել, որն Ադամայ Աւայի ու բոլոր նախահարց որսնած չգտածն է ու մեր գտած և յոյսն է:

(Շարունակելէ):

Ա. Գ. Վ.



ԱՅՍ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՍ ՁԵՄ ԿԻՐՈՂ, ԹՈՂՈՒՆ

(Շարունակութիւն և վերջ, տես թիւ 10.)

Արդէն ՚ի մանկութենէ յաճախ կրկնած և ուսած մոլութեանց սարսափելի մէկ պատիժն ալ այն է, որ զայն թողիլ ուղած ատեննին մեծամեծ եւ անտանելի դժուարութիւններ քաշեն: Եւ ահա այն դժուարութեանց չտուկացող և գիմադրելու արիութիւն չու-